

Գլուխ X

Մի անգամ տեղի ունեցավ մի հանդիպում, որի ժամանակ նախկինում մեր հանդիպումներին չմասնակցած մեծ քանակությամբ մարդիկ էին հավաքվել:

Նրանցից մեկը հարցրեց. “Որտեղի՞ց է սկսվում ուղին”: Հարցը տվող մարդը չէր լսել Գ.-ի կողմից առաջարկած չորս ուղիների նկարագրությունը և օգտագործեց “ուղի” բառը իր սովորական կրոնա-միստիկական իմաստով:

- Ուղու վերաբերյալ գաղափարը հասկանալու հիմնական բարդություններից մեկը կայանում է այն փաստում, որ մարդիկ սովորաբար կարծում են, թե *ուղին* (նա ընդգծեց այս բառը) սկսվում է ընթացող կյանքի միևնույն մակարդակից: Նրանք միանշանակ սխալվում են: Ուղին սկսվում ենք մեկ այլ՝ ավելի բարձր մակարդակից: Սովորաբար սա է, որ մարդիկ սովորաբար չեն հասկանում: Կարծում են, որ ուղու վրա կանգնելը հեշտ է, սակայն իրականում այդպես չէ: Ես կփորձեմ բացատրել այս երևույթը հետևյալ կերպով.

Կյանքում մարդն ապրում է *պատահականությունների օրենքների*, ինչպես նաև երկու տեսակի ազդեցությունների համաձայն, որոնք նույնպես պատահականությունների կողմից են ղեկավարվում:

Առաջին տեսակի ազդեցությունները այն ազդեցություններ են, որոնք *ստեղծվում են ճիշտ այս կյանքում* կամ կյանքի կողմից: Դրանք ռասայի, ազգության, երկրի, կլիմայի, ընտանիքի, կրթության, հանրության, մասնագիտության, վարքի ու բարքի, հարստության, չքավորության, ժամանակակից գաղափարների և այլնի ազդեցություններն են: Երկրորդ տեսակի ազդեցությունները այն ազդեցություններն են, որոնք *այս կյանքից դուրս են ձևավորվել*՝ ներքին շրջանակի ազդեցությունները կամ էզոթերիկ ազդեցությունները, որոնք ձևավորվել են տարբեր օրենքների ներքո, չնայած նույնպես երկիր մոլորակի վրա: Այս ազդեցությունները նախորդից տարբերվում են նրանով, որ ծագումով *գիտակից* են: Սա նշանակում է, որ դրանք գիտակցաբար են ստեղծվել, գիտակից մարդկանց կողմից՝ որոշակի նպատակ հետապնդելու համար: Նման տեսակի ազդեցությունները սովորաբար կրոնական համակարգերի և ուսմունքի, փիլիսոփայական ուսմունքների, արվեստի գործերի և այլնի տեսքով են դրսևորվում:

Դրանք կյանք են արձակվում որոշակի նպատակի համար և միախառնվում են առաջին տեսակի ազդեցություններին: Սակայն միշտ պետք է հիշել, որ այս ազդեցությունները գիտակից են միայն իրենց ծագումով: Ներթափանցելով կյանքի համընդհանուր պատահողմը՝ նրանք ընկնում են պատահականության համընդհանուր օրենքի ներքո և սկսում *մեխանիկորեն* գործել, այն է՝ նրանք կարող են ներագդել մեկի վրա, իսկ մյուսի վրա չազդել, կարող են նրան հասնել կամ չհասնել: Փոխանցման և մեկնաբանության հետևանքով ենթարկվելով փոփոխությունների և խեղաթյուրման՝ երկրորդ տեսակի ազդեցությունները վերափոխվում են առաջին տեսակի ազդեցությունների, այսինքն՝ նրանք միաձուլվում են առաջին տեսակի ազդեցություններին:

Եթե մտորենք այս մասին, ապա կհասկանանք , որ մեզ համար դժվար չէ տարբերակել կյանքում ստեղծված ազդեցությունները այն ազդեցություններից, որոնց աղբյուրը կյանքից դուրս է: Հնարավոր չէ թվարկել դրանք, այս կամ այն ազդեցությունների գրացուցակը կազմել: Անհրաժեշտ է *հասկանալ*, և ամեն ինչ կախված է այս հասկացողությունից: Մենք խոսել ենք ուղու սկզբի մասին: Ուղու սկիզբը կախված է ճիշտ այս հասկացողությունից կամ այս երկու տեսակի ազդեցությունները տարբերակելու ունակությունից: Իհարկե նրանց բաժանումը անհավասարաչափ է: Մարդկանցից մեկը կարող է ավելի շատ ազդեցություն կրել քան մյուսը այն դեպքում, երբ դրա ակունքները ընկած են կյանքից դուրս, մյուսը կարող է ավելի քիչ ազդվել, երրորդ կարող է գրեթե ամբողջովին առանձնացած մնալ դրանցից: Սակայն հնարավոր չէ որևէ բան անել այդ ուղղությամբ: Սա արդեն ճակատագիր է: Ընդհանուր առմամբ խոսելիս և հաշվի առնելով հասարակ մարդկային կյանքի պայմանները և հասարակ մարդուն՝ պայմանները քիչ, թե շատ նույնն են բոլորի համար, ավելի ճիշտ, դժվարությունները բոլորի համար հավասար են: Բարդությունը ընկած է երկու տեսակի ազդեցությունները տարանջատելն է: Եթե, կրելով այդ ազդեցությունները, մարդը չզգա կամ չհասկանա դրանց տարբերությունները, ապա դրանց թողած ներազդեցություննք անձի վրա նույնպես անտարանջատելի կլինի, այսինքն դրանք կգործեն միևնույն կերպով, միևնույն մակարդակի վրա և կտան միևնույն արդյունքները: Սակայն, եթե մարդը կրելով այս ազդեցությունները սկսի տարբերել դրանք և մի կողմ դնի այն ազդեցությունները, որոնք կյանքի կողմից չեն ստեղծվել, ապա աստիճանաբար այս տարբերակումը ավելի կհեշտանա և որոշ ժամանակ անց մարդն այլևս չի շփոթի դրանք առօրյա կյանքի ազդեցությունների հետ:

Այն ազդեցությունների արդյունքները, որոնց ակունքները կյանքից դուրս են, կուտակվում են մարդու ներսում. նա *մտաբերում* է դրանք միասին, *զգում է* դրանք միասին: Դրանք սկսում են նրա ներսում մի որոշակի ամբողջություն կազմել: Նա հստակորեն չի գիտակցում, թե ինչ, ինչպես և ինչու կամ եթե նույնիսկ գիտակցում է, ապա սխալ բացատրություն է տալիս դրան: Սակայն սա չէ կարևորը, այլ այն փաստը, որ այս ազդեցությունների արդյունքները կուտակվում են նրա ներսում և որոշ ժամանակ անց նրա ներսում ստեղծում են *մազնիսական կենտրոն*, որը սկսում իր հանդեպ ձգել նմանատիպ ազդեցություններ և այսպերպ այն աճում է: Եթե մազնիսական կենտրոնը բավարար սնուցում է ստանում և եթե մարդու անհատականության այլ կողմերից որևէ ուժեղ ընդդիմությունը բացակայում է, մազնիսական կենտրոնը սկսում է ազդել մարդու կողմնորոշման վրա՝ ստիպելով նրան շրջվել և նույնիսկ շարժվել որոշակի ուղղությամբ: Երբ մազնիսական կենտրոնը բավարար ուժ և զարգացում է ստանում, մարդը սկսում է ուղու գաղափարը հասկանալ և փնտրել այն: Ուղու փնտրտուքները կարող են տարիներ տևել և ոչ մի բանի չհանգեցնել:

Սա կախված է պայմաններից, իրավիճակից, մազնիսական կենտրոնի ուժից, ներքին հակումների ուժից և ուղղությունից, որոնք այս փնտրտուքի հետ կապ չունեն և

կարող են շեղել մարդուն ճիշտ այն պահին, երբ առաջանում է ճանապարհը գտնելու հնարավորությունը:

Եթե մագնիսական կենտրոնը ճիշտ է աշխատում և եթե մադրը իսկապես փնտրում է կամ նույնիսկ, եթե ակտիվորեն չի փնտրում, բայց ունի ճիշտ զգացողություն, հնարավոր է հանդիպի մեկ այլ մարդու, ով գիտի ճանապարհի մասին և որ ուղղակիորեն կամ մեկ այլ մարդկանց միջոցով կապված է մի կենտրոնի հետ, որը պատահականությունների օրենքից դուրս է և որից առաջ են գալիս մագնիսական կենտրոնը ձևավորած գաղափարները:

Այստեղ ևս գոյություն ունեն մի շարք հնարավորություններ: Սակայն այս մասին ավելի ուշ կխոսենք: Այժմ եկեք պատկերացնենք, որ մարդը հանդիպել է մեկին, ով իսկապես գիտի ուղու մասին և պատրաստ է օգնել նրան: Այս մարդու ազդեցությունն անցնում է նրա մագնիսական կենտրոնով: Եվ *այս պահին* մարդն ազատվում է պատահականության օրենքից: Սա է պետք հասկանալ: Ուղին իմացող մարդու ազդեցությունը տվյալ մարդու վրա յուրահատուկ ազդեցություն է, որը տարբերվում է նախորդ երկուսից առաջին հերթին նրանով, որ այն *ուղղակի* ազդեցություն է, և երկրորդը՝ *զիտակից* ազդեցություն է: Երկրորդ տեսակի ազդեցությունները, որ ստեղծում են մագնիսական կենտրոնը, սկզբնապես զիտակից են, սակայն ավելի ուշ նրանք մղվում են կյանքի համընդհանուր մրրիկի մեջ և միախառնվում կյանքի կողմից ստեղծված ազդեցությունների հետ և հավասարապես ենթակա են դառնում պատահականության օրենքին: Երրորդ տեսակի ազդեցությունը երբևիցե չի կարող ենթակա լինել պատահականության օրենքին, նրանք ինքներն պատահականության օրենքից դուրս են և նրանց գործողությունը նույնպես պատահականության օրենքից դուրս է: Երկրորդ տեսակի ազդեցությունները կարող են առաջ մղվել գրքերի, փիլիսոփայական համակարգերի, ծիսակարգերի կողմից: Երրորդ տեսակի ազդեցությունները կարող են միայն ուղղակիորեն փոխանցվել մեկ անձից մյուսին՝ բանավոր խոսքի միջոցով:

Այն պահը, երբ ուղին փնտրող մարդը հանդիպում է ուղին իմացող մարդուն, կոչվում է *առաջին շեմք* կամ *առաջին քայլ*: Այս առաջին շեմքից սկիզբ է առնում *սանդուղքը*: “Սանդուղքն” ընկած է “կյանքի” և “ուղու” միջև: Միայն այս “սանդուղքն” անցնելով կարող է մարդը մուտք դնել “ուղու” վրա: Բացի այդ՝ տվյալ մարդը բարձրանում է սանդուղքով իր առաջնորդի օգնությամբ. նա ինքնուրույն չի կարող բարձրանալ սանդուղքով: Ուղին սկսվում է այնտեղից, որտեղ ավարտվում է սանդուղքը, այսինքն՝ *վերջին շեմքից*, սովորական կյանքի մակարդակից շատ ավելի բարձր մակարդակի վրա:

Հետևաբար հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե *որտեղից է սկսվում ուղին*: Ուղին սկսվում է մի բանից, որը նույնիսկ կյանքում առկա չէ, այդ պատճառով անհնար է ասել, թե ինչից է այն սկիզբ առնում: Երբեմն ասում են՝ սանդուղքով բարձրանալիս մարդը որևէ բանում վստահ չէ, հնարավոր է նա ամեն ինչին կասկածանքով վերաբերվի՝ իր սեփական ուժերին, այն բանին, թե արդյոք այն ամենն, ինչ նա անում է ճիշտ է, թե ոչ, իր *առաջնորդին* նրա գիտելիքներին և

կարողություններին: Միևնույն ժամանակ, այն ամենն ինչ նա ձեռք է բերում շատ անկայուն է. եթե նույնիսկ նա սանդուղքով բականաչափ բարձր բարձրանա, ապա ցանկացած պահին կարող է վայր ընկնել և սկսել ամենասկզբից: Սակայն, երբ նա անցնում է վերջին շեմքը և մուտք է գործում ուղու վրա, այս ամենը փոխվում է: Առաջին հերթին, իր առաջնորդի հանդեպ ունեցած հնարավոր բոլոր կասկածները փարատվում են, և միևնույն ժամանակ առաջնորդի անհրաժեշտությունը այժմ արդեն պակասում է: Շատ դեպքերում նա նույնիսկ կարող է անկախ լինել և իմանալ, թե որ ուղղությամբ է շարժվում: Բացի այդ, նա այլևս այդքան հեշտությամբ չի կարող կորցնել իր աշխատանքի արդյունքները և հայտնվել սովորական կյանքում: Եթե նույնիսկ նա հեռանա ուղուց, ապա չի կարողանա վերադառնալ այնտեղ, որտեղից սկսել էր:

Ահա և այն ամենն, ինչ կարելի է ասել “սանդուղքի” և “ուղու” մասին, քանի որ կան շատ տարբեր ուղիներ: Մենք այս մասին նախկինում խոսել ենք: Եվ, օրինակ՝ չորրորդ ուղու վրա կան հատուկ պայմաններ, որոնք հնարավոր չեն մյուս ուղիների դեպքում: Այսպիսով, չորրորդ ուղու սանդուղքով բարձրանալու պայմաններից մեկն այն է, որ տվյալ անձը չի կարող ավելի վերև բարձրանալ, մինչև իր աստիճանի վրա մեկ այլ մարդու չկանգնացնի: Հաջորդն իր հերթին պետք է իր տեղը մեկ այլ՝ երրորդ մարդով փոխարինվի, որպեսզի կարողանա ավելի բարձր բարձրանալ: Այսպիսով, որքան բարձրանում է մարդը, այնքան ավելի մեծ կախվածության մեջ է ընկնում իր հետևորդներից: Եթե նրանք կանգ են առնում, ապա նա նույնպես կանգ է առնում: Նման իրադրություն կարող է առաջանալ նաև ուղու վրա: Օրինակ՝ մարդը կարող է որևէ բան ձեռք բերել, որոշակի հատուկ ունակություններ, իսկ հետագայում հնարավոր է ստիպված լինի գոհաբերելու այդ ընդունակությունները՝ այլ մարդկանց իր մակարդակին հասցնելու համար: Եթե այն մարդիկ, որոնց հետ նա աշխատում է, բարձրանան իր մակարդակին, ապա նա ետ կստանա այն ամենն ինչ գոհաբերել է: Սակայն, եթե նրանք չբարձրանան, ապա հնարավոր է, որ նա ամբողջովին կորցնի դրանք:

Այն ինչ վերաբերում է տվյալ իրավիճակում հայտնված ուսուցչի և էզոթերի կենտրոնների կապին, գոյություն ունեն բազմաթիվ հնարավորություններ, մասնավորապես՝ նա կարող է էզոթերիկ կենտրոնների մասին իմանալ ավելի շատ կամ ավելի քիչ, նա կարող է իմանալ, թե կոնկրետ որտեղ է այս կենտրոնը և ինչպես էր ստացվում կամ ինչպես կարելի է գիտելիքներ ստանալ դրա միջոցով: Հնարավոր է նա որևէ բան չիմանա այդ մասին և ճանաչի միայն այն մարդուն, ումից որ ստանում է իր գիտելիքները: Մեծամասամբ, մարդիկ սկսում են հենց այն կետից, որը իրենցից մի աստիճանով է բարձր: Եվ միայն իրենց զարգացմանը համաչափ են կարողանում տեսնել ավելին և գիտակցել, թե ձեռք բերված գիտելիքները որտեղից են:

Ուսուցչի դեր ստանձնած մարդկանց աշխատանքի արդյունքները կախված չեն այն բանից, թե արդյոք նա հստակորեն գիտի իր ուսմունքի ծագման մասին, այլ այն բանից, արդյոք իր գաղափարները էզոթերիկ կենտրոնի իրական փաստեր են, և արդյոք նա ինքը հասկանում և տարբերակում է էզոթերիկ գաղափարները, այսինքն՝ օբյեկտիվ

գիտելիքների գաղափարները, սուբյեկտիվ, գիտական և փիլիսոփայական գաղափարներից:

Մինչ այժմ ես խոսել եմ ճիշտ մագնիսական կենտրոնից, ճիշտ առաջնորդից և ճիշտ ուղուց: Սակայն հնարավոր է մի իրավիճակ, որտեղ մագնիսական կենտրոնը սխալ է ձևավորվել: Հնարավոր է այն առանձնացված լինի իր ներսում, այսինքն՝ պարունակի հակասություններ: Դեռ ավելին՝ դրա մեջ կարող են ներթափանցել կյանքում առաջացած առաջին տեսակի ազդեցությունները, երբեմն երկրորդ տեսակի ազդեցությունների դիմակի ներքո կամ երկրորդ տեսակի ազդեցությունների հետքերի տեսքով, որոնք շատ հաճախ այն աստիճանի են խեղաթյուրվում, որ հակասում են ինքներն իրենց: Նման սխալ ձևավորված մագնիսական կենտրոնով մարդը նույնպես կարող է փնտրել ուղին և հանդիպել մի մարդու, որն իրեն ուսուցիչ կանվանի և կասի, թե գիտի ուղին և որ կապված է պատահականությունների օրենքից դուրս գտնվող կենտրոնի հետ: Սակայն իրականում նա կարող է և չիմանալ ուղին և կապված չլինի նման կենտրոնի հետ: Դեռ ավելին՝ այստեղ նույնպես կան բազմաթիվ հնարավորություններ.

1. Նա հիրավի կարող է սխալվել և հավատալ, որ ինչ-որ բան գիտի, մինչդեռ իրականում նա ոչինչ էլ չիմանա:
2. Հնարավոր է նա հավատա մեկ այլ մարդու, որն իր հերթին է սխալվում:
3. Հնարավոր է նա գիտակցաբար խաբի:

Այնուհետև, եթե ուղին փնտրող մարդը հավատա տվյալ անձին, ապա վերջինս նրան կտանի ոչ թե խոստացած, այլ մեկ այլ ճանապարհով: Հնարավոր է այդ անձը նրան իրական ուղուց շատ հեռու տանի և հանգեցնի այնպիսի արդյունքների, որոնք իրական ուղուն ուղղակիորեն հակասում են:

Բարեբախտաբար նման դեպքերը շատ հազվադեպ են, այսինքն՝ սխալ ուղիները շատ բազմաթիվ են, սակայն մեծամասամբ որևէ բանի չեն հանգեցնում: Եվ մարդը պարզապես միևնույն տեղում պտույտ է գործում և կարծում է, թե շարժվում է որևէ ուղղությամբ:

- Ինչպե՞ս կարելի է ճանաչել սխալը, - հարցրեց ինչ-որ մեկը:

- Ինչպե՞ս կարելի է ճանաչել այն, - ասեց Գ.-ն : Հնարավոր չէ ճանաչել սխալ ուղին, եթե չճանաչեք ճիշտը: Սա նշանակում է, որ մարդը կարիք չունի անհանգստանալու սխալ ուղին ճանաչելու մասին: Նա պետք է մտածի, թե ինչպես գտնի ճիշտ ուղին: Հենց սրա մասին ենք մենք անընդմեջ խոսում: Երկու բառով հնարավոր չէ բացատրել սա: Սակայն իմ ասածից կարող եք շատ օգտակար եզրակացություններ կատարել, եթե հիշեք այն ամենն, ինչ ասվել է և այն ամենն, ինչ հետևում է դրանից: Օրինակ՝ կարող եք տեսնել, որ ուսուցիչը միշտ համապատասխանում է աշակերտի մակարդակին: Որքան բարձր է աշակերտի

մակարդակը, այնքան ավելի բարձր կարող է լինել ուսուցչինը: Մակայն այն աշակերտը, ում մակարդակը առանձնապես բարձր չէ չի կարող հույսը դնել շատ բարձր մակարդակի ուսուցչի վրա: Իրականում աշակերտը երբևիցե չի կարող տեսնել ուսուցչի մակարդակը: Սա օրենք է: Որևէ մեկը չի կարող իր մակարդակից այն կողմ տեսնել: Մակայն իրականում մարդիկ ոչ միայն չգիտեն այդ մասին, այլ ընդհակառակը՝ որքան ցածր է նրանց մակարդակը, այնքան ավելի բարձր մակարդակի ուսուցիչ են նրան պահանջում: Այս մտքի ճիշտ ընկալումը արդեն բավականին մեծ հասկացողություն է: Մակայն դա շատ հազվադեպ է տեղի ունենում: Սովորաբար ինքը մարդը մի գրոշ նույնիսկ չարժի, սակայն, բացի Հիսուս Քրիստոսից այլ ուսուցիչ չպետք է ունենա: Ավելի քչին նա չի համաձայնի: Եվ նրա գլուխը երբևիցե չի մտնի, որ եթե նույնիսկ այնպիսի ուսուցչի հանդիպեր, ինչպես Հիսուս Քրիստոսն է՝ դիտարկելով նրան այնպես ինչպես նա նկարագրվում է ՔԱվետարանում, ապա նա երբևիցե Հիսուսին չէր կարողանա հետևել, քանի որ անհրաժեշտ կլիներ որպեսզի նա լիներ առնվազն առաքյալի մակարդակին, որպեսզի նա կարողանար Հիսուս Քրիստոսի աշակերտը դառնար: Սա հստակ օրենք է: Որքան բարձր լինի ուսուցիչը, այդքան ավելի դժվար կլինի աշակերտի համար: Եվ եթե ուսուցչի և աշակերտի միջև եղած տարբերությունը անցնեն որոշակի սահմաններ, ապա աշակերտի ճանապարհին եղած դժվարությունները անհաղթահարելի են դառնում: Չորրորդ ուղու հիմնարար կանոններից մեկը կապված է հենց այս օրենքի հետ: Չորրորդ ուղու վրա ուսուցիչը *մեկը* չէ: Տարիքով մեծն է ուսուցիչը: Որքան ուսուցիչն է անհրաժեշտ աշակերտին, այնքան էլ աշակերտն է անհրաժեշտ ուսուցչին: Աշակերտը չի կարող առաջ ընթանալ առանց ուսուցչի, իսկ ուսուցիչը՝ առանց աշակերտի կամ աշակերտների: Եվ սա ընդհանուր նկատառում չի, այլ անհրաժեշտ և բավականին կոնկրետ կանոն, որի վրա հիմնված է մարդու առաջընթացը: Ինչպես արդեն ասվել է, որևէ մեկը չի կարող մեկ քայլ առաջ գնալ, մինչև մեկ այլ մարդու իր տեղը չկանգնեցնի: Այն ինչ մարդը ստացել է, նա պետք է անմիջապես ետ վերադարձնի, միայն այդ դեպքում նա կարող է ավելի շատ ստանալ: Այլապես նրանից կվերցվի նույնիսկ այն, ինչ նրան արդեն տրվել է:

Հաջորդ հանդիպումներից մեկի ժամանակ Գ.-ի ներկայությամբ, երբ վերջինս ստիպեց ինձ կրկնել այն, ինչ նա ասել էր ուղու և մագնիսական կենտրոնի վերաբերյալ, ես մարմնավորեցի նրա գաղափարը հետևյալ գծապատկերում՝

Պատկեր 40

V... կյանքը

H... անհատը,

A... կյանքում առաջացած ազդեցությունները, այսինքն՝ հենց կյանքի ներսում, որոնք առաջին տեսակի ազդեցություններն են,

В... կյանքից դուրս առաջացած ազդեցությունները, որոնք սակայն արտամղվել են կյանքի համընդհանուր պտտահողմը և երկրորդ տեսակի ազդեցություններն են,

Н1... հաջորդականության միջոցով էզոթերի կենտրոնի հետ կապված կամ դրան հավակնող մարդը,

Е... էզոթերի կենտրոն, որը կյանքի համընդհանուր օրենքներից դուրս է գտնվում,

М... մարդու մոտ մագնիսական կենտրոնը,

С... հ1 մարդու ազդեցությունը հ մարդու վրա: Եթե նա իրականում կապված է էզոթերիկ կենտրոնին՝ ուղղակիորեն կամ հաջորդականությամբ, ապա սա երրորդ տեսակի ազդեցությունն է: Այս ազդեցությունը գիտակից է և դրա գործունեության ընթացքում ո կետի ներքո, այսինքն՝ մագնիսական կենտրոնում, մարդն ազատվում է պատահականությունների օրենքից;

Н2 ... ինքն իրեն կամ մյուսներին խաբող մարդը, որը որևէ կապ չունի էզոթերիկ կենտրոնի հետ, ոչ ուղղակիորեն, ոչ էլ հաջորդաբար:

Հաջորդ հանդիպումներից մեկի ժամանակ՝ գիտելիքների և գոյի վերաբերյալ բավականին երկար քննարկումներից հետո, Գ.-ն ասեց.

- Ճիշտն ասած, դուք դեռևս չեք կարող խոսել գիտելիքներից, որովհետև չգիտեք, թե գիտելիքները որտեղից են սկսվում: Գիտելիքներ սկսվում են *տիեզերքների ուսմունքից*. Ձեզ ծանոթ են “մակրոկոսմ” և “միկրոկոսմ” արտահայտությունները: Սա նշանակում է “մեծ տիեզերք” և “փոքր տիեզերք”, “մեծ աշխարհ” և “փոքր աշխարհ”: Տիեզերքը համարվում է “մեծ տիեզերք” և մարդը՝ որպես “փոքր տիեզերք”, որը նման է մեծին: Սա, կարծես, սահմանում է աշխարհի և մարդու միջև եղած միասնության և նմանության գաղափարը: Երկու տիեզերքների ուսմունքը հայտնի է Կաբալայից և այլ ավելի հին համակարգերից: Սակայն այս ուսմունքը ամբողջական չէ և դրանից որևէ եզրահանգման հնարավոր չէ գալ, ոչինչ դրա վրա հնարավոր չէ կառուցել: Դրանից ոչինչ հնարավոր չէ ստանալ, քանի որ այս ուսմունքը ընդամենը մի կտոր է վերցված մեկ այլ, ավելի լիարժեք, հինավուրց էզոթերիկ ուսմունքից տիեզերքների կամ աշխարհների մասին, որոնք ներառված են միմյանց մեջ և ստեղծվել են նրանց մեծագույնի կերպարանքով, որն իր մեջ ներառում է մնացած ամեն ինչ: “Ինչպես վերևում, այնպես էլ ներքևում” արտահայտություն է, որ վերաբերում է տիեզերքներին:

Սակայն կարևոր է իմանալ, որ տիեզերքների ամբողջական ուսմունքում խոսվում է ոչ թե մեկ կամ երկու տիեզերքներից, այլ՝ յոթ, որոնք ներառված են մեկը մյուսի մեջ:

Միայն յոթ տիեզերքները իրենց փոխհարաբերություններով միասին վերցված կարող են տալ տիեզերքի ամբողջական պատկերը: Երկու նմանատիպ տիեզերքների գաղափարը, որ պատահականորեն պահպանվել է մեծն և ամբողջական ուսմունքից, այնքան թերի է, որ որևէ պատկերացում չի կարող տալ մարդու և տիեզերքի միջև եղած նմանության վերաբերյալ:

Տիեզերքների ուսմունքը ուսումնասիրում է յոթ տիեզերք:

Առաջին տիեզերքը *Պրոտոկոսմոսն* է՝ առաջին տիեզերքը:

Երկրորդ տիեզերքը *Այոկոսմոսն* է՝ սուրբ տիեզերքը կամ *Մեզայոկոսմոսը*,
“մեծն տիեզերքը”:

Երրորդ տիեզերքը *Մակրոկոսմոսն* է՝ “մեծ տիեզերքը”:

Չորրորդ տիեզերքը *Դեուտերոկոսմոսն* է՝ “երկրորդ տիեզերքը”:

Հինգերորդ տիեզերքը *Մեսոկոսմոսն* է՝ “միջին տիեզերքը”:

Վեցերորդ տիեզերքը *Տրիտոկոսմոսն* է՝ “երրորդ տիեզերքը”:

Յոթերորդ տիեզերքը *Միկրոկոսմոսն* է՝ “փոքր տիեզերքը”:

Արարման ճառագայթում *Պրոտոկոսմոսը* Բացարձակն է կամ աշխարհ 1-ը:
Այոկոսմոսը աշխարհ 3-ն է (արարման ճառագայթում “բոլոր աշխարհները”):
Մակրոկոսմոսը մեր աստղային աշխարհն է կամ Ծիր Կաթինը (արարման ճառագայթում աշխարհ 6-ը): *Դեուտերոկոսմոսը* Արեգակն է, Արեգակնային համակարգը (աշխարհ 12-ը): *Մեսոկոսմոսը* “բոլոր մոլորակներն են” (աշխարհ 24-ը) կամ Երկիր մոլորակը որպես մոլորակային աշխարհի ներկայացուցիչ: *Տրիտոկոսմոսը* մարդն է: *Միկրոկոսմոսը* “ատոմն է”:

Ինչպես արդեն նախկինում բացատրել եմ, - ասեց Գ.-ն, - ատոմ է համարվում այն ցանկացած ամենափոքր նյութը, որտեղ նյութը պահպանում է բոլոր իր հատկությունները՝ ֆիզիկական, քիմիական, հոգեբանական և տիեզերական: Այս տեսանկյունից կարող է, օրինակ, գոյություն ունենալ “ջրի ատոմ”:

Կտեսնե՞ք, որ յոթ տիեզերքների ընդհանուր համակարգում Միկրոկոսմոսը և Մակրոկոսմոսը իրարից այնքան հեռու են գտնվում, որ անհնարի՞ք է տեսնել կամ ուղղակիորեն որևէ նմանություն սահմանել:

Յուրաքանչյուր տիեզերք կենդանի էակ է, որը ապրում, շնչում, մտածում և զգում է, ծնվում և մահանում է:

Բոլոր տիեզերքները միևնույն ուժերի և միևնույն օրենքների գործողությունների արդյունքում են առաջանում: Օրենքները միևնույնն են ամենուր: Սակայն նրանք տարբեր կամ գոնե ոչ միանման ձևերով են դրսևորում իրենց տիեզերքի տարբեր մակարդակներում: Հետևաբար տիեզերքները ամբողջովին միանման չեն: Եթե օկտավաների օրենքը գոյություն չունենար, նրանց միջև եղած նմանությունը լիարժեք կլիներ, սակայն օկտավաների օրենքի շնորհիվ, նրանց միջև լիարժեք նմանությունը բացակայում է, այնպես ինչպես բացակայում է լիարժեք նմանությունը օկտավայի տարբեր նոտաների միջև: Միայն *երեք* տիեզերք միասին վերցված կարելի է նմանացնել մյուս երեքին:

Յուրաքանչյուր մակարդակի, այն է՝ յուրաքանչյուր տիեզերքի վրա օրենքների իրագործման պայմանները սահմանվում են երկու հարակից տիեզերքների կողմից՝ վերևի և ներքևի: Իրար կողքի գտնվող երեք կոսմոսները կտան տիեզերքում գործող օրենքների ամբողջական պակերը: Մեկ կոսմոսը չի կարող տալ ամբողջական պատկեր: Այսպիսով, մեկ կոսմոսը ճանաչելու համար անհրաժեշտ է ճանաչել նաև նրա երկու հարակից կոսմոսները՝ վերևի և ներքևի, այսինքն՝ ավելի մեծ և ավելի փոքր: Միասին վերցված այս երկու կոսմոսները սահմանում են այն կոսմոսը, որն ընկած է

նրանց միջև: Այսպիսով, Մեսոկոսմոսը և Միկրոկոսմոսը միասին վերցված սահմանում են Տրիտոկոսմոսը: Դեուտերկոսմոսը և Տրիտոկոսմոսը սահմանում են Մեսոկոսմոսը և այլն: Կոսմոսների միջև եղած հարաբերությունը տարբերվում է արարաման ճառագայթի աստղաբանական աշխարհների միջև եղած հարաբերությունից: Արարման ճառագայթում գտնվող աշխարհների միջև եղած փաստացի հարաբերությունները դիտարկվում են այնպես, ինչպես նրանք գոյություն ունեն տիեզերքում մեզ համար, այսինքն՝ մեր տեսանկյունից. Լուսինը, Երկիրը, մոլորակները, Արեգակը, Ծիր Կաթինը և այլն: Հետևաբար արարման ճառագայթում աշխարհների քանակական միջհարաբերությունը մեկը մյուսի նկատմամբ մշտական չէ: Որոշ դեպքերում կամ որոշ մակարդակների վրա այն ավելի մեծ է, օրինակ՝ «բոլոր արեգակների» հարաբերությունը մեր Արեգակի նկատմամբ, իսկ մյուս դեպքերում կամ մյուս մակարդակներում՝ ավելի փոքր, օրինակ՝ Երկրի հարաբերությունը Լուսնի նկատմամբ: Սակայն կոսմոսների միջհարաբերությունը հարատև է, միշտ նույնը: Այլ կերպ ասած՝ մի կոսմոսը հարաբերվում է մյուսի հետ, ինչպես *զրոն անվերջության հետ*: Սա կնշանակի, որ Միկրոկոսմոսի հարաբերությունը Տրիտոկոսմոսի նկատմամբ այնպիսին է, ինչպիսին զրոյի հարաբերությունը անվերջության նկատմամբ: Տրիտոկոսմոսի հարաբերությունը այնպիսին է, ինչպիսին զրոյի հարաբերությունը անվերջության: Մեսոկոսմոսի հարաբերությունը Դեուտերկոսմոսի նկատմամբ նույնն է, ինչ զրոն անվերջության նկատմամբ, և այլն:

Որպեսզի հասկանանք կոսմոսների տարանջատումը և նրանց միջև եղած հարաբերությունները, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է նշանակում զրոյի հարաբերությունը անվերջության նկատմամբ: Եթե հասկանանք, թե դա ինչ է նշանակում, ապա մեզ համար պարզ կդառնան նաև տիեզերքի բաժանումը կոսմոսների, նման բաժանման անհրաժեշտությունը և, թե ինչու առանց նման տարանջատման աշխարհի մասին քիչ թե շատ պարզ պատկերացում կազմելը անհնարավարին կլինեք:

Կոսմոսների գաղափարը մեզ կօգնի հասկանալ մեր տեղն այս աշխարհում: Այն կլուսաբանի շատ խնդիրներ, ինչպես օրինակ՝ տարածության, ժամանակի և այլնի հետ կապված խնդիրները: Նախ և առաջ այս գաղափարը կծառայի *հարաբերակցության սկզբունքի* սահմանմանը: Վերջինս հատկապես կարևոր է, քանի որ անհնար է ունենալ աշխարհի մասին հստակ պատկերացում՝ չսահմանելով հարաբերակցության սկզբունքը: Կոսմոսների գաղափարը մեզ հնարավորություն է ընձեռնում ամուր հիմքի վրա դնել հարաբերակցության ուսումնասիրությունը: Առաջին հայացքից կոսմոսների համակարգում շատ պարադոքսալին երևոյթներ կան: Իրականում, սակայն, այս ակնհայտ պարադոքսը պարզապես պայմանականություն է:

Մարդու գիտակցությունն ընդլայնելու և գիտելիքները հարստացնելու նրա կարողությունը հնարավոր դարձնելու գաղափարը ուղղակիորեն հարաբերվում է կոսմոսների մասին ուսմունքին: Իր սովորական վիճակում մարդը ընկալում է ինքն իրեն *մեկ կոսմոսում* և բոլոր այլ կոսմոսները նա դիտարկում է մեկ կոսմոսի տեսանկյունից: Իր գիտակցության ընդլայնումը և իր հոգեկան գործառույթների

ինտենսիվությունը միաժամանակ նրան ուղղորդում են երկու այլ կոսմոսների գործողության և կենսական դաշտ՝ վերին և ստորին, որոնցից մեկը մեծ է, մյուսը՝ փոքր: Գիտակցության ընդլայնումը միայն մեկ ուղղությամբ չի ընթանում, այն է՝ միայն վերին կոսմոսների ուղղությամբ. շարժվելով դեպի վեր՝ այն միևնույն ժամանակ վար է իջնում:

Այս գաղափարների միջոցով միգուցե լուսաբանվեն այն բառակապակցությունները, որոնք դուք հնարավոր է հանդիպած լինեք օկուլտային գրականության մեջ: Օրինակ՝ կա այսպիսի մի ասացվածք՝ “Դեպի վերև տանող ճանապարհը միևնույն ժամանակ տանում է դեպի ներքև”: Որպես կանոն, այս խոսքը սխալ է մեկնաբանվում:

Իրականում սա նշանակում է, որ օրինակ՝ եթե մարդը սկսում է զգալ մոլորակների կյանքը, նա միևնույն ժամանակ սկսում է զգալ ատոմների կյանքը կամ նրա գիտակցությունը անցնում է դրանց մակարդակին: Այսկերպ գիտակցության ընդլայնումը երկու ուղղություններով է ընթանում՝ դեպի ավելի մեծն ու դեպի ավելի փոքրը: Եվ մեծը և փոքրը իրենց ճանաչման համար նմանատիպ փոփոխություն են պահանջում մարդուց: Փորձելով գուգահեռներ տանել և նմանություններ գտնել կոսմոսների միջև՝ մենք կարող ենք յուրաքանչյուր կոսմոս դիտարկել երեք հարաբերությունների տեսանկյունից.

1. ինքն իր նկատմամբ ունեցած հարաբերությունից
2. ավելի բարձր կամ ավելի մեծ կոսմոսների նկատմամբ
3. ավելի ցածր կամ ավելի փոքր կոսմոսների նկատմամբ:

Գլուխ 10-րդ (9 գրքի էջ)

“Մեկ տիեզերքի օրենքների դրսևորումը մեկ այլ տիեզերքում հրաշք է հանդիսանում: Այլ տեսակի հրաշք գոյություն չունի: Հրաշքը օրենքի ոտնահարում չէ, ոչ էլ օրենքից դուրս ֆենոմեն”: Դա մի երևույթ է, որը տեղի է ունենում այլ տիեզերքի օրենքների համաձայն: Այս օրենքները անհասկանալի են մեզ համար և անհայտ և, հետևաբար, զարմանահրաշ: “Հարաբերականության օրենքները հասկանալու համար՝ շատ կարևոր է ուսումնասիրել տվյալ տիեզերքի կյանքը և երևույթները՝ կարծես մեկ այլ տիեզերքից դրանց նայելով. այսինքն՝ վերլուծել դրանք այլ տիեզերքի օրենքների տեսակետից ելնելով: Տվյալ տիեզերքի կյանքի բոլոր երևույթները, այլ տիեզերքի հիման վրա վերլուծելով, ենթադրում են միանգամայն տարբեր տեսանկյուն և միանգամայն տարբեր իմաստ ունեն: Մի շարք նոր երևույթներ են ի հայտ գալիս, և մի շարք այլ երևույթներ անհետանում են: Ընդհանուր առմամբ, սա ամբողջովին փոխում է աշխարհի և առարկաների պատկերը”: “Ինչպես արդեն ասվել է, միայն տիեզերքի գաղափարը կարող է հիմք հանդիսանալ հարաբերականության օրենքների ստեղծման համար: Հետևաբար, կարելի է ասել, որ գիտությունն ու փիլիսոփայությունը, այս տերմինների բուն իմաստով, սկիզբ են առնում տիեզերքի գաղափարից”:

Սա ասելուց հետո, բավականին երկար լռությունից հետո, Գ.-ն շրջվեց իմ կողմ և ավելացրեց. «Փորձե՛ք քննարկել այն ամենն, ինչ հենց նոր ասեցի, ձեր սեփական հարթության տեսակետից»:

«Այն ամենն, ինչ հենց նոր Դուք ասեցիք, - ասեցի ես, - առանց կասկածի վերաբերում է հարթությունների խնդիրներին: Սակայն մինչ ես դրանց կանցնեմ, կուզենայի մեկ տեսակետ լուսաբանել, որն ինձ համար բավարար պարզ չէ: Դա վերաբերում է Ձեր՝ Միկրոտիեզերքի վերաբերյալ ասածին: Մենք սովոր ենք Միկրոտիեզերքի գաղափարը կապել մարդու հետ: Սա նշանակում է, որ մարդն ինքնին աշխարհ է ներկայացնում: Աշխարհ, որը համանման է մեծ աշխարհի՝ Մակրոտիեզերքի: Սակայն, Դուք մարդուն անվանում եք Տրիտոտիեզերք. այսինքն՝ երրորդ տիեզերք: Ինչու՞ երրորդ: Առաջինը Պրոտոտիեզերքն է, երկրորդը՝ արևը կամ Դեուտերոտիեզերք: Ինչու՞ է մարդը երրորդ տիեզերք:

«Այս պահին դժվար է բացատրել, - ասեց Գ.-ն, - դուք դա հետո կհասկանաք»:

«Բայց, արդյո՞ք Դուք իրոք ի նկատի ունեք, որ Միկրոտիեզերքի հասկացությունը չի կարող օգտագործվել մարդու վերաբերյալ», - հարցրեց ունկնդիրներից մեկը, - «սա մեծ տարբերություն է ստեղծում տերմինաբանության մեջ»:

«Այո, այո, - ասեց Գ.-ն, - Մարդը Տրիտոտիեզերքն է: Միկրոտիեզերքը ատոմն է կամ ավելի ճիշտ, - նա դադար տվեց՝ կարծես բառն էր ման գալիս, - միկրոբը: Բայց մի կենտրոնացե՛ք այս հարցի շուրջ: Այդ ամենը հետո կբացատրվի»¹:

Այնուհետև նա նորից շրջվեց իմ կողմը. «Տես ինչ կարող ես ասել քո տեսակետից՝ հաշվի առնելով այն ամենն, ինչ նոր ասացի»:

«Առաջին հերթին մենք պետք է հասկանանք, թե ինչ է նշանակում զրոյի հարաբերակցությունը անսահմանության հետ, - ասեցի ես, - եթե սա հասկանանք, նաև կհասկանանք մեկ տիեզերքի կապը մեկ այլ տիեզերքի հետ: Մեր ուսումնասիրությանը հասանելի աշխարհում գոյություն ունի զրոյի և անսահմանության հարաբերակցության միանգամայն պարզ օրինակ: Երկրաբանության մեջ որոշակի թվի հարթությունների մեկ միավորի հարաբերակցությունն է թվով ավելի մեծ հարթությունների մեկ այլ միավորի հետ: Կետի հարաբերակցությունը գծին, գծի հարաբերակցությունը հարթությանը, հարթության հարաբերակցությունը գետնին, գետնի՝ եռաչափ մարմնի հարաբերակցությունը քառաչափին և այլն:

Եթե ընդունում ենք այս տեսակետը, մենք նաև պետք է ընդունենք, որ մեկ տիեզերքի հարաբերակցությունը մյուսին տարբեր հարթությունների երկու մարմինների հարաբերակցություն է: Եթե մեկ տիեզերքը եռաչափ է, ապա մյուս տիեզերքը, այսինքն դրան հաջորդողը, պետք է լինի քառաչափ, մյուսը՝ հնգաչափ և այլն: Եթե որպես ելակետ ընդունենք «ատոմը» կամ «միկրոբը» այսինքն՝ Միկրոտիեզերքը, ինչպես ասում եք Դուք, ապա այս կետի համեմատ մարդը կլինի գիծ, այսինքն՝ մեկ հարթության վրա տեղակայված մարմին: Մյուս տիեզերքը՝ երկիրը, կլինի հարթություն՝ համեմատած մարդու հետ, այսինքն՝ կունենա երկու տարածություն,

¹ այստեղ սա նշվում է, քանզի հետո Գ.-ն փոխեց այս միտքը:

ինչպես իրականում տեղի է ունենում ուղղակի ընկալման դեպքում: Արևը՝ արեգակնային համակարգը, կլինի եռաչափ՝ համեմատած երկրի հետ: Աստղալից աշխարհը կլինի քառաչափ՝ համեմատած արևի հետ: “Բոլոր աշխարհները” հնգաչափ են, և բացարձակ կամ Պրոտոտիեզերքը վեցաչափ է:

Տիեզերքների համակարգում անձամբ ինձ ամենաշատ հետաքրքիրն այն է, որ ես դրանցում տեսնում եմ Տիեզերքի իմ նոր մոդելի “հարթությունների լիարժեք ժամանակահատվածը”: Սա միայն մանրամասների զուգադիպությունն չէ. այն լիովին նույնական է: Ես չգիտեմ, թե ինչպես է այդ ամենը ստեղծվել. ես երբևէ չեմ լսել միմյանց հարաբերակցվող յոթ տիեզերքների մասին, որոնք գտնվում են գրոյի և անսահմանության հարաբերակցության ներքո: Այնուամենայնիվ, հարթությունների իմ ժամանակահատվածը միանգամայն ճշգրտորեն համընկնում է այս ամենի հետ:

“Հարթությունների ժամանակահատվածը իր մեջ պարունակում է յոթ հարթություն. գրոյական հարթությունը, առաջինը, երկրորդը և այդպես շարունակ մինչև վեցերորդը: Զրոյական հարթությունը կամ կետը սահմանն է: Սա նշանակում է, որ մենք ընկալում ենք որևէ բան ինչպես կետ, սակայն չգիտենք, թե ինչ է թաքնված այդ կետի ետևում: Այն իրականում կարող է լինել կետ, այսինքն՝ հարթություն չունեցող մարմին, սակայն այն կարող է լինել մի ողջ աշխարհ, սակայն այնպիսի աշխարհ, որն մինչ այժմ մեզնից անջատված է, կամ այնքան փոքր է, որ մեզ կետ է թվում: Այս կետի շարժումը տիեզերքում մեզ գիծ է թվում: Միևնույն ժամանակ կետն ինքնին տիեզերքը, որում այն շարժվում է, ընկալում է որպես գիծ: Գծի դեպի իրեն ուղղահայաց շարժումը ինքնաթիռ կլինի, և այդ գիծը տիեզերքը, որի երկայնքով այն շարժվում է, կընկալի որպես ինքնաթիռ:

Մինչ այժմ ես վերլուծում էի գիծը կետի տեսանկյունից, սակայն կետը, գիծը և հարթությունը կարող են նաև դիտվել եռաչափ մարմնի տեսակետից: Այս դեպքում հարթությունը կլինի մարմնի սահմանը, կամ դրա կողմը, կամ էլ մի մասը: Գիծը կլինի հարթության սահմանափակող սահմանը կամ էլ հարթության մի մասը: Կետը կլինի գծի սահմանը կամ մի մասը:

Եռաչափ մարմինը տարբերվում է կետից, գծից և հարթությունից նրանով, որ այն ունի իրական ֆիզիկական գոյություն մեր ընկալման ներքո:

Հարթությունը իրականում մարմնի պռոյեկցիան է միայն, և կետը գծի պռոյեկցիան է:

Մարմինը ունի անկախ ֆիզիկական գոյություն, այսինքն՝ այն ունի մի շարք տարբեր ֆիզիկական հատկություններ:

Բայց երբ ասում ենք, թե որևէ բանը գոյություն ունի, ի նկատի ունենք այս գոյությունը ժամանակի ներքո: Սակայն եռաչափ տիեզերքում ժամանակ գոյություն չունի: Ժամանակը գոյություն ունի եռաչափ տիեզերքից դուրս: Ժամանակը, ինչպես մենք այն զգում ենք, գտնվում է քառաչափ հարթության վրա: Գոյությունը մեզ համար գոյություն է ժամանակի ներքո: Ժամանակի ներքո գոյությունը քառաչափ հարթության երկայնքով շարժում է կամ ընդլայնում: Եթե ընկալենք գոյությունը ինչպես ընդլայնում

քառաչափ հարթության երկայնքով, եթե ընկալենք կյանքը ինչպես քառաչափ մարմին, ապա եռաչափ մարմինը կլինի դրա մի մասը, դրա պոռոցկցիան կամ դրա սահմանը:

Բայց ժամանակի ներքո գոյությունը չի ենթադրում գոյության բոլոր ասպեկտները: Բացի ժամանակի ներքո գոյություն ունենալուց, այն ամենը, ինչ կա, գոյություն ունի նաև հավերժականության ներքո:

Հավերժականությունը ժամանակի ամեն մի պահի անսահման գոյությունն է: Եթե մենք ընկալում ենք ժամանակը գծի տեսքով, ապա այս գիծը ամեն պահի կարող է հատվել հավերժականության գծերով: Ժամանակի գծի ամեն կետ կհանդիսանա գիծ հավերժականության մեջ: Ժամանակի գիծը կլինի հավերժականության հարթություն: Հավերժականությունը ժամանակից մեկ հարթություն ավել ունի: Հետևաբար, եթե ժամանակը գտնվում է քառաչափ հարթության վրա, ապա հավերժականությունը գտնվում է հնգաչափ հարթության վրա: Եթե ժամանակի տիեզերքը քառաչափ է, ապա հավերժականության տիեզերքը հնգաչափ է:

Բացի այդ, հինգերորդ և վեցերորդ հարթությունների իմաստը հասկանալու համար, ժամանակի վերաբերյալ որոշակի տեսակետ պետք է ընդունվի:

Ժամանակի ամեն մի պահ պարունակում է հնարավորությունների որոշակի թիվ, երբեմն փոքր թիվ, երբեմն՝ մեծ, բայց երբեք անսահման թիվ: Անհրաժեշտ է հասկանալ, որ կան հնարավորություններ ու անկարողություններ: Ես կարող եմ այս սեղանից վերցնել և գետնին զցել թղթի մի կտոր, մատիտ կամ մոխրաման, սակայն ես չեմ կարող սեղանից նարինջ վերցնել և զցել գետնին, քանզի նարինջը սեղանին չի: Մա միանշանակորեն սահմանում է հնարավորության և անկարողության միջև եղած տարբերությունը: Գոյություն ունեն հնարավորությունների մի քանի համադրություններ ի հարաբերություն այն բաների, որոնք կարելի է զցել գետնին այս սեղանից: Ես կարող եմ զցել մատիտ, թղթի կտոր կամ մոխրաման, կամ էլ մատիտ և թղթի կտոր, կամ մատիտ և մոխրաման, կամ թղթի կտոր և մոխրաման, կամ այդ ամենը միասին, կամ էլ ոչինչ: Գոյություն ունեն միայն այս հնարավորությունները: Եթե հաշվի առնենք ժամանակի պահը, պահը, երբ այս հնարավորությունները գոյություն ունեն, ապա մյուս պահը կլինի այն պահը, երբ իրականացվում է այս հնարավորություններից որևէ մեկը: Մատիտը ընկած է գետնին: Մա հնարավորություններից մեկի իրականացումն է: Այնուհետև նոր պահ է գալիս: Այս պահը նույնպես որոշակի իմաստով ունի հնարավորությունների որոշակի թիվ: Եվ դրան հետևող պահը նույնպես կլինի հնարավորություններից որևէ մեկի իրականացման պահը: Որևէ հնարավորության իրականացման այս պահերի հաջորդականությունից է կազմված ժամանակի գիծը: Սակայն ժամանակի ամեն պահ հավերժության մեջ անսահման գոյություն ունի: իրականացված հնարավորությունները շարունակվում են անվերջ իրականացվել հավերժության մեջ, մինչդեռ չիրականացված հնարավորությունները շարունակում են մնալ չիրականացված և չիրականացվող:

Բայց աշխարհում ստեղծված կամ աշխարհից ծագող բոլոր հնարավորությունները պետք է իրականացվեն: Աշխարհում ստեղծված կամ աշխարհից ծագող հնարավորությունների իրականացումն է սահմանում աշխարհի էությունը:

Միաժամանակ հավերժականության սահմանների ներքո այս հնարավորությունների իրականացման համար տեղ չկա: Հավերժականության մեջ այն ամենն է, ինչ իրականացվել է շարունակում է իրականանալ, և այն ամենն, ինչը չի իրականացվել շարունակում է մնալ չիրականացված: Հավերժականությունն է, այնուամենայնիվ, իրենից ներկայացնում է ժամանակի գծով հատված հարթություն: Այս գծի ամեն պահին մնում են որոշակի քանակի չիրականացված հնարավորություններ: Եթե պատկերացնենք այս հնարավորությունների իրականացման գիծը, դրանք կշարժվեն շառավղի երկայնքով՝ սկսվելով տարբեր անկյուններում գտնվող որոշակի կետից դեպի ժամանակի և հավերժության գծերը: Այս գծերը կշարժվեն հավերժականությունից դուրս՝ հնգաչափ տիեզերքից դուրս, դեպի ավելի բարձր հավերժություն՝ կամ վեցաչափ տիեզերք՝ վեցերորդ հարթության վրա:

Վեցերորդ հարթությունը բոլոր հնարավորությունների իրականացման գիծն է:

Հինգերորդ հարթությունը մշտական գոյության կամ իրականացված հնարավորությունների կրկնության գիծն է:

Չորրորդ հարթությունը մեկ հնարավորության իրականացման պահերի հաջորդականությունն է:

Ինչպես արդեն նշել եմ, յոթ՝ զրոյական հարթությունից մինչև վեցերորդը, հարթություններից է կազմված հարթությունների լրիվ ժամանակահատվածը: Այս ժամանակահատվածի ետևում կամ ոչինչ չկա կամ էլ նույն ժամանակահատվածը կարող է կրկնվել մեկ այլ մակարդակի վրա:

Ինչպես արդեն ասել եմ, տիեզերքների համակարգը, որի նկարագրությունը մենք հենց նոր լսեցինք, ինձ ամենից զուտ զարմացնում է այն փաստով, որ այն միանգամայն համապատասխանում է “հարթությունների ժամանակահատվածին”, որն էլ հանդիսանում է տիեզերքի իմ Նոր մոդելի հիմքը. միայն թե տիեզերքների այս համակարգը ավելի խորն է ներթափանցում և բացատրում է շատ բաներ, որոնք պարզ չէին տիեզերքի իմ մոդելում:

Այսպիսով, եթե վերցնենք Միկրոտիեզերքը, այսինքն՝ “ատոմը” և “միկրոբը”, ինչպես այն սահմանել է Գ.-ն, ապա Տրիտոտիեզերքը ի համեմատ դրա կլինի քառաչափ տիեզերք, Մետոտիեզերքը կլինի հնգաչափ և Դեուտերոտիեզերքը՝ վեցաչափ:

Սա նշանակում է, որ “ատոմի” և “միկրոբի” բոլոր հնարավորությունները իրականացվում են արեգակնային համակարգի սահմանների ներքո:

Եթե ենթադրենք, որ մարդը տրիտոտիեզերքն է, ապա նրա համար մետոտիեզերքը կլինի քառաչափ տիեզերք, Դեուտերոտիեզերքը կլինի հնգաչափ և Մակրոտիեզերքը՝ վեցաչափ: Սա նշանակում է, որ Տրիտոտիեզերքի բոլոր հնարավորությունները իրականացվում են Մակրոտիեզերքում:

Հետևաբար, սրան զուգահեռ Մետոտիեզերքի բոլոր հնարավորությունները իրականացվում են Այոտիեզերքում, և Դեուտերոտիեզերքի՝ կամ արևի բոլոր հնարավորությունները իրականացվում են Պրոտոտիեզերքում կամ Բացարձակությունում:

Ամեն տիեզերք ինքնին եռաչափ է, քանի որ ամեն տիեզերք ունի իրական ֆիզիկական գոյություն: Համեմատած ամելի ցածր տիեզերքի հետ՝ այն քառաչափ է, համեմատած ավելի բարձր տիեզերքի՝ այն կետ է: Այլ կերպ ասած, ակն ինքնին եռաչափ է, սակայն չորրորդ հարթությունը նրա համար գտնվում է վերևի կամ ներքևի տիեզերքում: Վերջին միտքը, գուցե, ամենապարադոքսալինն է, բայց, այնուամենայնիվ, այն հենց այն է, ինչ պետք է լինի: Եռաչափ մարմնի համար՝ ինչպիսին է տիեզերքը, չորրորդ հարթությունը գտնվում է ինչպես շատ մեծ ուժգնության հարթությունում և շատ փոքր ուժգնության հարթություններում, այնպես էլ իրենից անսահմանություն ներկայացնող հարթությունում, ինչպիսին է իրականում զրո հանդիսացող հարթությունը:

Այնուհետև մենք պետք է հասկանանք, որ անգամ միևնույն մարմնի եռաչափությունը կարող է տարբեր լինել: Միայն վեցաչափ մարմինը կարող է լիովին իրական լինել: Հնգաչափ մարմինը ընդամենն իրենից ներկայացնում է վեցաչափ մարմնի անկատար տեսք, քառաչափ մարմինը հնգաչափ մարմնի անկատար տեսքն է, եռաչափ մարմինն էլ քառաչափի անկատար տեսքն է: Եվ, իհարկե, հարթությունը եռաչափ մարմնի անկատար տեսքն է, այսինքն՝ դրա մի մասի պատկերը: Նույն ձևով գիծը հարթության անկատար տեսքն է, և կետն էլ գծի անկատար տեսքն է:

Ավելին, չնայած չգիտենք ինչպես, վեցաչափ մարմինը կարող է ինքն իրեն եռաչափ մարմնի տեսքում տեսնել: Որևէ մեկը, կողքից նայելով, նույնպես կարող է այն տեսնել ինչպես եռաչափ մարմին, բայց միանգամայն այլ ձևի եռաչափության ներքո: Օրինակ՝ մենք երկրագունդը եռաչափ ենք պատկերացնում: Եռաչափությունը միայն երևակայական է: Երկրագունդը ինքնին լիովին տարբեր եռաչափ մարմին է՝ համեմատած մեր պատկերացրած եռաչափությանը: Մեր պատկերը թերի է: Մենք այն տեսնում ենք ինչպես իր կատարյալ էության մասի մասի մաս:

“Երկրի գլոբուսը” երևակայական մարմին է: Այն վեցաչափ երկրագնդի մասի մասի մասն է: Սակայն այս վեցաչափ երկրագունդը կարող է միայն եռաչափ լինել ինքնին, և մենք չգիտենք դա և չենք կարող գաղափար կազմել այն ձևի մասին, որում երկրագունդը տեսնում է ինքն իրեն:

Երկրագնդի հնարավորությունները իրականացվում են Այոտիեզերքում. սա նշանակում է, որ Այոտիեզերքում երկրագունդը վեցաչափ մարմին է: Եվ իրականում, մենք ինչ-որ չափով կարող ենք տեսնել, թե ինչպես է փոխվում երկրագնդի ձևը:

Դեռուտերոտիեզերքում երկրագունդը, արևի հետ համեմատած, այլևս կետ չէ (կետը ընդունելով որպես եռաչափ մարմնի նվազեցման աստիճան), այլ գիծ, որին մենք հետևում ենք որպես արևի շուրջը տանող երկրագնդի ճանապարհ: Եթե մենք արևը դիտարկենք Մակրոտիեզերքում, այսինքն՝ եթե մենք պատկերացնենք արևի շարժման գիծը, ապա այն կդառնա արևի շարժման գիծը շրջափակող պարույր: Եթե պատկերացնենք այս պարույրի լայնակի շարժումը, ապա այն կկառուցի մի պատկեր, որը մենք չենք կարող պատկերացնել, քանզի չգիտենք այս շարժման բնույթը, բայց որը, այնուամենայնիվ, կլինի երկրագնդի վեցաչափ պատկերը, որը երկրագունդը ինքը կարող է տեսնել, որպես եռաչափ պատկեր: Սա անհրաժեշտ է հիմնավորել և

հասկանալ, քանի որ, այլապես, տիեզերքների եռաչափությունը կկապվի մեր եռաչափ մարմինների գաղափարի հետ: Նույնիսկ միննույն մարմնի եռաչափությունը կարող է լինել տարբեր:

“Եվ այս վերջին տեսակետը ինձ թվում է, որ կապված է նրա հետ, ինչ Գ.-ն անվանում է “հարաբերականության օրենք”: Նրա հարաբերականության օրենքն ընդհանուր ոչինչ չունի մեխանիկայում հարաբերականության օրենքի կամ Էյնշտեյնի հարաբերականության օրենքի հետ: Այն նորից նույնն է տիեզերքի Նոր մոդելում, այն գոյության հարաբերականության օրենքն է”:

Այստեղ ես ավարտում եմ իմ՝ բազմաթիվ հարթությունների տեսնակյունից տիեզերական համակարգերի հետազոտությունը:

“Շատ նյութ կա նրանում, ինչպես Դուք հենց նոր ասեցիք,- ասեց Գ.-ն, -բայց այդ նյութը պետք է մշակել: Եթե Դուք պարզեք, թե ինչպես կարող եք մշակել այն նյութը, որը Դուք հիմա ունեք, Դուք կհասկանաք շատ ավելին, քան մինչ այժմ հասկացել էիք: Օրինակ՝ հաշվի առեք, որ ժամանակը տարբեր է տարբեր տիեզերքներում: Եվ այն կարելի է ճշգրիտ հաշվել, այսինքն՝ հնարավոր է ճշգրտորեն սահմանել, թե ժամանակը մի տիեզերքում ինչպես է հարաբերվում ժամանակին մեկ այլ տիեզերքում”:

“Ես միայն մեկ բան կավելացնեմ՝ ժամանակը շունչ է, փորձիր հասկանալ սա”:

Նա այլևս ոչինչ չասեց:

Հետագայում Գ.-ի Մոսկվայի աշակերտներից մեկն ասեց, որ մի անգամ, տիեզերքների և տարբեր տիեզերքներում տարբեր ժամանակի մասին խոսելիս, Գ.-ն ասել է, որ կենդանի էակների և բույսերի քնելն ու արթնանալը, այսինքն քսանչորս ժամը կամ ցերեկն ու գիշերը, համապատասխանում են “օրգանական կյանքի շնչառությանը”:

Գ.-ի դասախոսությունը տիեզերքների վերաբերյալ և դրան հաջորդած խոսակցությունը շարժեցին իմ հետաքրքրությունը: Սա ուղիղ անցում էր “եռաչափ տիեզերքից”, որից մենք սկսել էինք, դեպի իմ մշակած տիեզերքի Նոր մոդելի խնդիրներին, այսինքն՝ տարածության և ժամանակի և ավելի բարձր հարթությունների խնդիրներին, որոնց վրա ես աշխատել էի մի քանի տարի:

Մոտ մեկ տարի Գ.-ն ոչինչ չավելացրեց այն ամենին, ինչ ասել էր տիեզերքների վերաբերյալ:

Մեզնից ոմանք փորձեցին այս խնդիրներին մոտենալ տարբեր կողմերից և, չնայած մենք բոլորս տիեզերքների գաղափարի վերաբերյալ էներգիայի մեծ պոտենցիալ էինք զգում, երկար ժամանակ ոչ մի արդյունք չէինք ստանում: Մեզ հատկապես շփոթեցնում էր “Միկրոտիեզերքը”:

“Եթե հնարավոր լիներ մարդուն դիտարկել որպես Միկրոտիեզերք և մարդկային ռասսան որպես Տրիտոտիեզերք, կամ ավելի ճիշտ որպես օրգանական կյանք, ավելի հեշտ կլիներ հիմնավորել մարդու հարաբերակցությունը այլ տիեզերքների նկատմամբ”, - ասեց Ջ.-ն՝ մեզնից մեկը, ով ինձ հետ միասին փորձել էր հասկանալ և զարգացնել տիեզերքների հետագա գաղափարը:

Բայց մեկ, երկու անգամ, երբ մենք սկսեցինք խոսել Գ.-ի հետ դրա մասին, նա պնդեց էր իր սահմանումները:

Հիշում եմ մի անգամ, երբ նա հեռանում էր Պետերբուրգից, հավանաբար դա նրա վերջնական մեկնումն էր 1917-ին, մեզնից մեկը տիեզերքների հետ կապված ինչ-որ բան հարցրեց նրան:

“Փորձեք հասկանալ, թե ինչ է նշանակում “Միկրոտիեզերք”, - պատասխանեց Գ.-ն: Եթե Ձեզ հաջողվի հասկանալ դա, ապա այն ամենը, ինչի մասին Դուք հարցնում եք հիմա, Ձեզ համար ավելի պարզ կդառնա”:

Հիշում եմ, երբ հետագայում խոսում էինք դրա մասին, խնդիրը շատ հեշտ էր լուծել, երբ “Միկրոտիեզերքը” դիտարկում էինք որպես մարդ:

Անշուշտ սա պայմանականություն էր, բայց, այնուամենայնիվ, այն միանգամայն համապատասխանում էր այն համակարգին, որնք ուսումնասիրում է աշխարհը և մարդուն: Յուրաքանչյուր կենդանի էակ՝ շուն, կատու, ծառ, կարելի էր դիտարկել, որպես Միկրոտիեզերք. բոլոր կենդանի էակների ամբողջությունը համապատասխանում էր Տրիտոտիեզերքին կամ երկրագնդի վրա օրգանական կյանքին: Այս սահմանումները ինձ համար միակ տրամաբանորեն հնարավոր սահմանումներն էին: Եվ ես չէի կարողանում հասկանալ, թե ինչու էր Գ.-ն դրանց առարկում:

Ամեն դեպքում, որոշ ժամանակ անց, երբ ես վերադարձա տիեզերքների խնդիրներին, ես որոշեցի մարդուն դիտարկել որպես Միկրոտիեզերք, իսկ երկրագնդի վրայի օրգանական կայնքը որպես Տրիտոտիեզերք:

Այս կառուցվածքով շատ բաներ սկսեցին ավելի կապված լինել: Եվ մի անգամ՝ “Ճշմարտության նշույլներ” ձեռագիրը թերթելիս, որը ինձ Գ.-ն էր տվել, այսինքն՝ այն պատմության սկիզբը, որը կարդացվել էր Մոսկվայի խմբում, երբ առաջին անգամ ես գնացի այնտեղ, ես ձեռագրում գտա “Մակրոտիեզերք” և “Միկրոտիեզերք” արտահայտությունները, ավելին՝ “Միկրոտիեզերք” նշանակում էր մարդ:

Այժմ Դուք որոշակի գաղափար ունեք Մակրոտիեզերքի կյանքը կառավարող օրենքների վերաբերյալ և վերադարձել եք երկիր: Կրկնեք ինքներդ Ձեզ “Ինչպես վերևում, այնպես էլ ներքևում”: Ես արդեն մտածում եմ առանց հետագա բացատրությունների, Դուք չեք վիճարկի այն հայտարարությունը, որ անհատի կյանքը՝ Մկրոտիեզերքը, կառավարվում է նույն օրենքներով:

“Ճշմարտության նշույլներ”

Սա ավելի է ուժեղացնում մեր որոշումը՝ ընդունել “Միկրոտիեզերքն” որպես մարդու: Հետագայում մեզ համար պարզ դարձավ, թե ինչու էր Գ.-ն ցանկանում, որ մենք կիրառենք “Միկրոտիեզերքն” գաղափարը փոքր մագնիտուդների նկատմամբ համեմատած մարդու հետ, և ինչին էր նա ցանկանում ուղղել մեր մտքերը:

Այս թեմայով մի խոսակցություն եմ հիշում:

“Եթե մենք ցանկանում ենք գրաֆիկորեն պատկերել տիեզերքների փոխհարաբերությունը, - նա ասեց, - մենք պետք է դիտարկենք Միկրոտիեզերքը, այսինքն՝ մարդուն, որպես կետ, այսինքն մենք պետք է նրան դիտարկենք շատ փոքր

մասշտաբով, և մեզնից բավականին շատ հեռավորության վրա: Այդ դեպքում նրա կյանքը Տրիտոտիեզերքում, այսինքն՝ այլ մարդկանց և բնության մեջ, կլինի այն գիծը, որին նա հետևում է երկրագնդում՝ մի տեղից մյուսը շարժվելիս: Մեսոտիեզերքում, այսինքն, եթե հաշվի առնենք երկրագնդի՝ իր առանցքների շուրջը քսանչորսժամյա պտույտ կատարելու փաստը, այս գիծը կդառնա հարթություն, մինչդեռ համեմատած արևի հետ, այսինքն, եթե հաշվի առնենք երկրագնդի՝ արևի շուրջը կատարած պտույտը, այն կդառնա եռաչափ մարմին. հետևաբար մենք կունենանք երկու եռաչափություններ:

Այս դեպքում մարդու բոլոր հնարավորությունները իրականացվում են արևում: Մա համապատասխանում է նրան, ինչ ասվել էր նախկինում, այսինքն, որ համար յոթ մարդը արեգակնային համակարգի սահմաններում դառնում է անմահ:

Արևից դուրս, այսինքն՝ արեգակնային համակարգից դուրս, նա չի կարող գոյություն ունենալ կամ, այլ կերպ ասած, հաջորդ տիեզերքի տեսանկյունից նա ընդհանրապես գոյություն չունի: Մակրոտիեզերքում մարդը ընդհանրապես գոյություն չունի: Մակրոտիեզերքը այն տիեզերքն է, որտեղ իրականանում են Տրիտոտիեզերքի հնարավորությունները, իսկ մարդը կարող է գոյություն ունենալ Մակրոտիեզերքում միայն որպես Տրիտոտիեզերքի ատոմ: Երկրագնդի հնարավորություններն իրականանում են Մեգալոտիեզերքում, իսկ արևի հնարավորությունները իրականանում են Պրոտոտիեզերքում:

Եթե Միկրոտիեզերքը կամ մարդը եռաչափ մարմին է, ապա Տրիտոտիեզերքը՝ երկրագնդի վրայի օրգանական կյանքը, քառաչափ մարմին է: Երկրագունդը հնգաչափ է, իսկ արևը՝ վեցաչափ:

Սովորաբար գիտական տեսակետը մարդուն դիտարկում է որպես եռաչափ մարմին, երկրագնդի վրայի օրգանական կյանքը՝ որպես ամբողջություն, ավել շատ ֆենոմեն, քան եռաչափ մարմին, երկրագունդը դիտարկվում է որպես եռաչափ մարմին, արևը, արեգակնային համակարգը և Ծիր Կաթինը նույնպես դիտարկվում են որպես եռաչափ մարմիններ:

Այս տեսակետի անճշգրտությունը բացահայտվում է, երբ մենք փորձում ենք պատկերացնել մի տիեզերքի գոյությունը մեկ այլ տիեզերքում, այսինքն ավելի ցածր տիեզերքը՝ ավելի բարձրում, ավելի փոքրը՝ ավելի մեծ տիեզերքում, այնպես, ինչպես օրինակ՝ մարդու գոյությունը օրգանական կյանքում կամ օրգանական կյանքի հետ համեմատած: Այս դեպքում օրգանական կյանքը անխոս պետք է դիտարկվի ժամանակի մեջ: Գոյությունը ժամանակի մեջ չորրորդ հարթության հավելումն է:

Երկրագունդը նույնպես չի կարող դիտարկվել որպես եռաչափ մարմին: Այն եռաչափ կլիներ, եթե անշարժ լիներ: Նրա պտույտն իր առանցքների շուրջը մարդուն դարձնում է հնգաչափ էակ, իսկ նրա պտույտն արևի շուրջը, հենց երկրագնդին դարձնում է քառաչափ: Երկրագունդը գունդ չէ, այլ պարույր, որը շրջափակում է արևը, իսկ արևը նույնպես գունդ չէ, այլ մի իլիկ է այս պարույրի մեջ: Պարույրը և իլիկը միասին պետք է լայնակի շարժում կատարեն հաջորդ տիեզերքում, բայց մենք չենք

կարող իմանալ, թե ինչ արդյունք կունենա այս շարժումը, քանի որ չգիտենք, ոչ դրա բնույթը, ոչ էլ ուղղությունը:

Այնուհետև յոթ տիեզերքները ներկայացնում են “հարթության ժամանակահատվածները”, բայց սա չի նշանակում, որ տիեզերքների շղթան ավարտվում է Միկրոտիեզերքով: Եթե մարդը Միկրոտիեզերք է, այսինքն՝ տիեզերք է ինքն իր մեջ, ապա նրա մարմինը կազմող միկրոսկոպիկ բջիջները նրան հարաբերվում են այնպես, ինչպես հենց մարդն է հարաբերվում երկրագնդի վրայի օրգանական կյանքին: Միկրոսկոպիկ բջիջը, որը միկրոսկոպիկ տեսանելիության սահմանագծում է, բաղկացած է միլիարդավոր մոլեկուլներից, որոնք իրենց մեջ պարունակում են հաջորդ քայլը, հաջորդ տիեզերքը: Ավելի հեռուն գնալով՝ կարող ենք ասել, որ հաջորդ տիեզերքը կլինի էլեկտրոնը: Այսպիսով, մենք ստացել ենք երկրորդ Միկրոտիեզերքը՝ բջիջը, երրորդը՝ մոլեկուլը, և չորրորդը՝ էլեկտրոնը: Այս բաժանումները և սահմանումները, այսինքն “բջիջներ”, “մոլեկուլներ” և “էլեկտրոններ”, հավանաբար շատ թերի են. միգուցե ժամանակի ընթացքում գիտությունը կսահմանի ուրիշները, բայց սկզբունքը միշտ կմնա նույնը, և ավելի ցածր տիեզերքները միշտ ճշգրտորեն այսպես կհարաբերվեն Միկրոտիեզերքին:

Դժվար է վերականգնել այն բոլոր գրույցները, որոնք այն ժամանակ մենք ունենում էինք տիեզերքների վերաբերյալ:

Հաճախ ես վերադառնում էի Գ.-ի խոսքերին, որոնք վերաբերվում էին հատկապես տարբեր տիեզերքներում տարբեր ժամանակին: Ես զգում էի, որ այստեղ մի հանելուկ կա, որը ես կարող եմ և պետք է լուծեմ:

Վերջապես, հավաքելով բոլոր մտքերս այս թեմայի վերաբերյալ, ես դիտարկեցի մարդուն որպես Միկրոտիեզերք: Հաջորդ տիեզերքը, հարաբերված մարդու հետ, ես դիտարկեցի “երկրագնդի վրայի օրգանական կյանքը”, որը ես կոչեցի Տրիտոտիեզերք, չնայած չէի հասկանում այս անունը, քանի որ չէի կարողանում պատասխանել այն հարցին, թե ինչու է երկրագնդի վրայի օրգանական կյանքը “երրորդ” տիեզերքը: Բայց անունը նյութական չէ: Դրանից հետո ամեն ինչ Գ.-ի համակարգի համապատասխան էր: Ստորև մարդը՝ հաջորդ ավելի փոքր տիեզերքը, “բջիջ” էր: Ոչ թե ցանկացած բջիջ կամ բջիջը ցանկացած պայմաններում, այլ պարզապես մեծ բջիջը, ինչպիսին է օրինակ՝ մարդու օրգանիզմի սաղմի բջիջը: Որպես հաջորդ տիեզերք կարելի է դիտարկել փոքր, ուլտրամիկրոսկոպիկ բջիջը: Միկրոսկոպիկ աշխարհում երկու տիեզերքների գաղափարը, այսինքն՝ երկու միկրոսկոպիկ անհատականությունների գաղափարը, որոնք միմյանցից տարբերվում են այնպես, ինչպես “մարդը” “մեծ բջիջից”, միանգամայն պարզ է բակտերիոլոգիայում:

Հաջորդ տիեզերքը մոլեկուլն էր, իսկ մյուսը՝ էլեկտրոնը: Ոչ “մոլեկուլը”, ոչ “էլեկտրոնը” ինձ համար շատ հնչեղ կամ ստույգ սահմանումներ չէին, բայց սրանք կարելի է գործածել այլ սահմանումների բացակայության դեպքում:

Այսպիսի հաջորդականությունը անկասկած ներկայացրեց կամ հաստատեց ամբողջովին անհամատեղելիություն տիեզերքների միջև, այսինքն՝ այն պահպանեց

գրոյի հարաբերակցութիւնը անսահմանութեանը: Եվ հետագայում այս համակարգը հնարավոր դարձրեց բավականին շատ հետաքրքիր կառույցների գոյութիւնը:

Տիեզերքների գաղափարը հետագա զարգացում ստացավ միայն մեկ տարի հետո այն ժամանակից, երբ առաջին անգամ լսեցինք դրա մասին, այսինքն՝ 1917թ.-ի գարնանը, երբ առաջին անգամ ինձ հաջողվեց կառուցել “տարբեր տիեզերքներում ժամանակի աղյուսակը”: Բայց այս աղյուսակի մասին ես հետագայում կխոսեմ: Միայն կավելացնեմ, որ Գ.-ն երբեք չբացատրեց, ինչպես խոստացել էր, տիեզերքների անունները և դրանց ծագումը: